ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ՑՈՒՅՑԸ
(100-ամյակի առթիվ)

XIX դ. 80-ական թվականներից Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում սկսում են ստեղծվել ազատագրական նպատակներ հետապնդող գաղտնի կազմակերպություններ և ընկերություններ Վանում («Սև խաչ»), Կարինում («Պաշտպան հայրենյաց»), «Փոքր Հայքի կազմակերպության» մասնաճյուղերը Մարզվանում, Եվդոկիայում, Արաբկիրում, Սեբաստիայում, Մալաթիայում։ Այդ կազմակերպությունների հիմնական շարժիչ ուժը գյուղի և քաղաքի արհեստավորներն ու երկրագործներն էին, իսկ ղեկավարությունը շատ հաճախ իր ձեռքն էր վերցնում ռավառի դեմոկրատ մտավորականությունը։ Նրանք կատարում էին գործնական աշխատանք ժողովրդի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար։ Չնայած որոշ անհաջողություններ («Պաշտպան հայրենյաց», «Փոքր Հայքի կազմակերպությունն» և այլն), այնուամենայնիվ, այդ կազմակերպությունները պարարտ հող էին նախապատրաստում 80-ականների Հերկրորդ կեսին ձևավորվող քաղաքական կուսակցությունների համար։ «Սև խաչի» հիմնական մասը կազմավորում է «Արմենական» կուսակցությունը, իսկ Սև ծովի ափամերձ քաղաքներում դտնվող «Փոքր Հայքի կազմակերպության» մասնաճյուղերը մեծ մասամբ ներգրավվում են Հնչակյան կուսակցության մեջ։ Տասնամյակի վերջին ավելի է սաստկանում սուլթանական ռեակցիան։ Ռավառի դեմոկրատ մտավորականության ներկայացուցիչներին և ժողովրդանվեր հողևոր առաջնորդներին արգելվում է մնալ գավառներում։ Էրզրումից հեռանում է Մաղաքիա Օրմանյանը, Վանից արտաքսվում է Մկրտիչ Փորթուգալյանը, պատվավոր աքսոր է մեկնում Մկրտիչ Խրիմյանը, Տրապիզոնից Կ. Պոլիս է կանչվում Գարեգին Սրվանձտյանցը, Մուշից՝ Գրիգորիս Ալեքսիյանը։ Պողոս Նաթանյանը Բալուից «կապանոք» արտաքսվում է և «հյուրընկալվում» Կ. Պոլսի բանտում, Արաբկիրից նույն բախտին է արժանանում հոգևոր առաջնորդ Եզնիկ Ապահունի վարդապետը։ Եվդոկիայում բանտարկվում են մի խումբ ուսուցիչներ՝ Գ. Փասպանյանի ղեկավարությամբ։ Հալածանքներին ուղիղ համեմատական վերելք էր ապրում ազգային-ազատագրական շարժումը։ Տասնամյակի վերջին հայտնվում են առաջին հայդուկները, որոնք գաղտնի տարբեր ճանապարհներով ղենք են փոխադրում Երկիր։

90-ականների սկիզբը նշանավորվում է նոր իրադարձություններով։ Կարինի երիտասարդությունը, համախմբված Սանասարյան վարժարանի ղեկավարության և դեմոկրատ մտավորականության շուրջը, գաղտնի մեծ աշխատանք է ծավալում ժողովրդի մեջ։ «Պաշտպան հայրենյաց»։ Նախկին ղեկավար Խաչատուր Կերեքճյանի՝ բանտից ազատվելուց հետո այդ աշխատանքներն ընթանում են ավելի հմուտ ձեռքերի մեջ։ Սակայն քնած չէին նաև Թուրքական կառավարության տեղական պաշտոնյաները։ Շոշափելի որևէ ապացույց չունենալով հանդերձ, նրանք էրկար նախապատրաստվում են Կարինի հեղափոխական ուժերին հակահարված տալու համար։ Գրգռելով տեղի Թուրք ամբոխի կրոնական մոլեռանդությունը, հրահրելով նրան թալանի և ավերի, Կարինի դինվորական նահանգապետի հրամանով 1890 թ. հունիսի 18-ին խուզարկվում է Սանասարյան վարժարանի շենքը և Կարինի մայր եկեղեցին։ Շենք գտնելու պատրվակով քանդում են վարժարանի հատակի տախտակները անգամ, իսկ եկեղեցին խուզարկելու ժամանակ թալանում նրա դույքը, պղծում սուրբ անոթներն ու պատկերները։ Դա լցնում է Կարինի հայության համբերության բաժակը և փոխհրաձգություն է սկսվում կառավարական զորքերի և հայ երիտասարդների միջև։ Խաղաղ բնակչությունից լինում են զոհեր[1]։ Դիմադրող հայերի մի մասին հաջողվում է ապաստանել օտարերկրյա հյուպատոսարաններում։ Գաղաղած մահմեդական ամբոխը հարձակվում է նույնիսկ հյուպատոսարանների վրա, շարդում դռներն ու պատուհանները, առանձնապես տուժում է անգլիական հյուպատոսարանը։ Ռուսական հյուպատոս Դեննետը գաղտնի հեռագրում հաղորդում է արտաքին գործերի մինիստրու-

---

[1] Հստ ռուսական հյուպատոսի տվյալների՝ 14 հոգի սպանված, 200-ից ավելի վիրավոր [Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև՝ ՌԱՔԱ), ֆ. քաղարխիվ, գ. 3441, թ. 16]։

թյանը, որ «Թուրք ամրոխը նախօրոք պատրաստված էր և նրա հարձակումը անակնկալ չէր»[2]։

Էրզրումի դեպքերը ճնշող ազդեցություն ունեցան ողջ արևմտահայ իրականության մեջ։ Երկիր անցած հնչակյանները, որոնք գործում էին Փոքր Հայքում, մեկնեցին Կ. Պոլիս, դրանց թվում՝ Ռուբեն Խանաղատը, Գարրիել Կաֆյանը, Հ. Մեղավորյանը։ Կ. Պոլսում նրանք հանդիպեցին մինչև Հնչակյան կուսակցության կազմավորվելը այնտեղ գործող Վարիչ Մարմնի աշրի ընկնող անդամների հետ և որոշեցին կազմակերպել հայ հեղափոխականների խաղաղ ցույց հայության ոգին բարձրացնելու, Էրզրումի իրադարձությունների ճնշող տպավորությունը ցրելու համար։ Կ. Պոլիսը ցույցի վայր ընտրելը բացատրվում էր նրանով, որ օսմանյան մայրաքաղաքը նաև արևմտահայ մշակութային կենտրոն էր, ուր կար ավելի քան 200.000 հայություն, որն իր ձայնը պետք է բարձրացներ հօգուտ գավառահայության։ Ցույցի նպատակն էր օտարերկրյա դեսպանների ուշադրությունը բևեռել հայկական հարցի վրա, ստիպել սուլթանին թուլացնել գավառահայության նկատմամբ կիրառվող հալածանքները, անհապաղ գործադրել Բեռլինի դաշնադրով նախատեսված բարենորոգումները։ Երկար քննարկվեց ցույցի պլանը։ Որոշվեց ցույցը անցկացնել հուլիսի 15-ին, Կաբինի դեպքերից ուղիղ մեկ ամիս անց, Թուրքական տոնակատարության՝ գուրպան բայրամի առաջին օրը։ Մշակվեց նաև ցույցի բովանդակությունը։ Պետք է գրվեր կարճ պահանջագիր, որը կարդացվելու էր Գում Գափուի մայր եկեղեցում՝ հոգևոր արարողության ժամանակ։ Այնուհետև, պատրիարք Աշըգյանի հետ այդ պահանջագիրը պետք է ներկայացվեր անձամբ սուլթանին։ Դրա համար ընտրվելու էին երկու հոգի՝ պահանջագիրը կարդալու, և պատրիարքի հետ սուլթանի պալատը մեկնելու համար։ Այդ զորը կամավոր հանձն առան վանեցի («Սև խաչ» նախկին անդամ, այժմ Կ. Պոլսի Վարիչ Մարմնի անդամ) Հարություն Ճանկյուլյանը և Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի աշակերտ Համբարձում Պոյաճյանը։ Գարրիել Կաֆյանը, Հ. Մեղավորյանը և Ռ. Խանաղատը ցույցը կազմակերպելուց հետո պետք է հեռանային Կ. Պոլսից, որպեսզի բռնվելու դեպքում կառավարությունը տեղյակ չլիներ օտարահպատակների մասնակցությանը։ Հուլիսի լույս 15-ի գիշերը Կ. Պոլիսը գավառին կապող հեռագրաթելերը նախատեսված էր կտրտել, որպեսզի սուլթանի եղջմից տրված շարգի հրամանը չհասներ տեղ։ Այդ գործը հանձնարարված էր տիվրիկցի Թորոս անունով մի երիտասարդի։ Զգուշության նկատառումներով ցույցի պլանի մասին չէր հայտնված անգամ տոնապետներին։ Միայն նրանց հրտհանդված էր իրենց տասնյակներով պատրաստ լինել մայր եկեղեցու մեջ։ Սակայն գործողությունները չընթացան ծրագրված պլանով։ Հոգևոր արարողությունը ընդհատելով, Հարություն Ճանկյուլյանը վերցրեց պահանջագիրը և սկսեց կարդալ։ Ժողովրդին պատեց հուզում, և սկսվեց խառնաշփոթ։ Օգտվելով դրանից, պատրիարք Խ. Աշըգյանը փախավ եկեղեցու սրահից և փակվեց խցիկներից մեկում։ Եկեղեցու պատին փակցված սուլթանի հրովարտակը պատռելուց հետո Ճանկյուլյանն ու Պոյաճյանը հետապնդեցին Աշըգյանին, ստիպելով նրան իրենց հետ կառք նստել և գնալ սուլթանի պալատը՝ պահանջագիրը նրան ներկայացնելու համար։ Սակայն պատրիարքը ընդդիմացավ և հրաժարվեց։ Ճանկյուլյանը ատրճանակի սպառնալիքի տակ կառք բարձրացրեց նրան։ Եկեղեցու իրարանցման լուրը հասել էր մայրաքաղաքի ոստիկանապետին, որը մի խմբով շտապեց կառքին ընդառաջ։ Փոխադարձ ընդհարումից հետո նրանց հաջողվեց բռնագրավել կառքը։

Ցույցի լուրը հասել էր նաև սուլթանին, տոնակատարության հենց սկզբին։ Սարսափած սուլթանը ցանկացավ ընդհատել տոնակատարությունը, սակայն պաշտոնյաները համոզեցին նրան չարունակել արարողությունը մինչև վերջ։

Սկսվեցին զանգվածային ձերբակալությունները։ Համբարձում Պոյաճյանին հաջողվեց խույս տալ և փախչել Աթենք։ Ժնևից այնտեղ էր տեղափոխվել Հնչակյան կենտրոնը։ Մի քանի օր անց ձերբակալվեց նաև Ա. Արփիարյանը։ Այնուհետև ձերբակալվում են Ազգային ժողովի նախկին ատենապետ, ազատականների պարագլուխ, դոկտոր Հարություն Թիրյաքյանը, Տատյան Վահրամ պեյը և Պետրոս Տոնապետյանը։ Ազգային ժողովի երեսփոխան, կրոնական ժողովի ատենապետ Մ. Խրիմյանը հրավիրում է բարձրաստիճան հայ հոգևորականների համագումար-ժողով, որը բողոք-տեղեկագրեր է ներկայացնում Բ. Դուռ, պահանջելով դադարեցնել հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ, իրագործել խոստացած բարենորոգումները, հոգևոր առաջնորդներին վերադարձնել գավառներ, պաշտոնանկ անել պատրիարք Աշըգյանին։ Այդ հանդուգն բողոքագրի համար ստորագրող եպիսկոպոսներին (Մ. Խրիմյան, Մ. Իզմիրլյան, Գ. Սրվանձտյանց, Գ. Ալեքսիձյան) Բ. Դուռը տալիս է համապատասխան պատիժ։ Երուսաղեմ է աքսորվում Խրիմյանը։ Սուլթանի հրամանով կազմվում է մի հանձնաժողով, որը պետք է

2 Նույն տեղում։

քննիչ։ Հուղումների պատճառը և մշակեր միջոցառումներ։ Այդ հանձնաժողովի մեջ մտան հայազգի կառավարական պաշտոնյաներ, ֆինանսների մինիստր Հակոբ փաշան, արտաքին գործերի մինիստրի օգնական Արթին փաշա Դաղյանը և արդարադատության մինիստրի օգնական Վահան էֆենդին[3]։ Հանձնաժողովի աշխատանքները և զեկուցումը պահվում էր խիստ գաղտնի։ Օդոստոսի 4-ին վերջինս ներկայացվեց սուլթանին։ Այն ուներ «խաղաղասիրական» բնույթ, Համոդում էր պատրիարքին՝ հետ վերցնել հրաժարականը և դրդում սուլթանին՝ հնարավորին չափ բավարարել հայ բնակչության ամենատարրական պահանջները։ Սակայն սուլթանը մտադիր չէր դիջումների։ Ըստ Արթին փաշայի՝ ռուսական դիվանագիտական կորպուսի աշխատակից Ժադովսկու հետ ունեցած զրույցի տվյալների, Բ. Դուռը անգործության էր մատնված և Հակված չէր դրական որևէ տեղաշարժի, իսկ հայ ժողովրդական հուդումները հասել էին այն աստիճանի, որ հայազգի թուրքական պաշտոնյան խաղաղ ելք չէր տեսնում կատարվածից[4]։ Սուլթանն ավելի սարսափում էր եվրոպական պետությունների՝ կոնկրետ Անգլիայի և Ռուսաստանի, միջամտությունից, դրա համար էլ մի կողմից սիրաշահվում էին օտարերկրյա դեսպանները, մյուս կողմից՝ ուժեղացվում հալածանքները։

Օդոստոսի սկզբին եղավ ցուցարարների դատ։ Հարություն Ճանկյուլյանը դատի ժամանակ ելույթ ունեցավ, դատապարտեց օսմանյան կառավարության հայահալած քաղաքականությունը, պահանջեց Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդների ցեղային խտրականության վերացում։ Նա ժխտեց դատարանի կողմից հայ ժողովրդին անջատողականության մեջ մեղադրելու փաստարկը։ «Մենք մեր պահանջագրով մեր իրավունքին մեջ ենք և ձեզմե կպահանջենք, իբրև օսմանյան հպատակներ մինչև հիմա մեր պարտականությունը կատարած ենք անթերի. ատոր փոխարեն ըստ օրենի կուզենք, որ գործադրվի և կիրարկվի մեր իրավունքը, որով հայերս իբրև մարդ ապրինք, ինչպես կապրին ձեր հպատակ այլազան տարրեր, այսինքն մեզի տրվին մեր իրավունքները՝ բոլոր լրացուցիչ պայմաններով, որով ուրիշ պահանջ մը չէ, այլ հավասարության գործադրությունը կպահանջենք, ինչպես ունին մյուս տարրերը կյանքի, ինչքի և պատվո ապահովության, նույնն ունենանք և մենք»[5]։ Պահանջելով հայկական գավառների հարստահարությունների վերացում, միևնույն ժամանակ Ճանկյուլյանը խնդիր էր դնում, որ հայ ժողովրդին տրվի ինքնապաշտպանության միջոցներ, սեփական ուժերով չարագործներին դիմադրավելու համար։ Հակառակ դեպքում մեղադրյալը գտնում էր, որ կգան նոր մարդիկ, որ «Պիտի ընդվզենք, նորեն կկրկնեմ, առանց անջատողական գաղափար մը ունենալու, և պիտի պարգենք ըմբոստության և ապստամբության դրոշակը. մահ կամ ազատություն գոչելով ձեր դեմը պիտի ելլենք մինչև վերջին ջունչերնիս կովիլ և մեր արյան վերջին կաթիլը թափել, կամ այն է իբր մարդ ապրելու մեր իրավունքը ձեռք բերել և կամ պատվավոր կերպով մեռնիլ»[6]։ Մեղադրյալը հանդես էր գալիս իբրև մեղադրող և պահանջում արմատական վերափոխումներ Թուրքական պետական մեքենայի մեջ։ Դատարանը Հարություն Ճանկյուլյանին դատապարտեց մահվան, մյուս ձերբակալվածներին 5—15 տարի բանտարկության։ Ապա սուլթանը «ողորմածաբար» կյանք շնորհեց Ճանկյուլյանին՝ դատապարտելով ցկյանս բանտարկության Թուրքական ամենադաժան բանտերից մեկում՝ Աքիայում։ Հեռակա կարգով ցկյանս բանտարկության դատապարտվեց նաև Համբարձում Պոյաճյանը, թերթերում հայտարարություն տրվեց, ուր նկարագրվում էր նրա արտաքինը։

Ցույցը բարձր գնահատականի արժանացավ Հնչակյան կենտրոնի կողմից։ «Հնչակը» հոդված նվիրեց այդ ցույցի նշանակության բացահայտմանը. «Ապստամբ հայ արյունն առաջին անգամ ոռոգեց Բյուզանդիայի փողոցները։ Հայն իր գլուխը արդեն բարձրացած էր հեղափոխական դրոշը ձեռքին։ Հանկարծ Եվրոպան վեր. թռավ և աչքը գցեց դեպի Արևելք, այդտեղ պատրաստվում էր ազատ անկախությունը գարերով ստրուկ մնացած մեկ ազգի։ Եվ Թուրքիայի բաժանման խնդիրը նորից հրևան եկավ։ Ամեն ճիգ, ամեն ջանք գործ դրած, սարսափած Թուրք կառավարության ու շողոքորթ և կեղտոտ մամուլի կողմից Եվրոպայի աչքին աննչան դարձնելու հուլիսի 15-ը, ապարդյուն անցավ... Թուրքիայի բաղմավեր մերկ մարմինը կրկին ընդհանուրի քննության ենթարկվեց, ամենքը տեսան, որ Թուրքիան երկունքի մեջ է, Նրան

---

3 Նույն տեղում, թ. 72։

4 Նույն տեղում, թ. 90—91։

5 Հ. Ճանկյուլյան, Հիշատակներ հայկական հեղաշրջման, մասն Գ, Պոլիս, 1913, էջ 108։

6 Նույն տեղում, էջ 109—110։

դեռ ստրուկ մնացած օտար ազգությունների ազատությունը ծնվելու վրա է, գնով նրա. Թուրքիայի սեփական մահի։ Ահա թե ինչ ցույց տվեց Տաճկաստանին 15-ը հուլիսի»[7]։ Անշուշտ, չափազանց մեծ դեր է վերագրվում Հնչակյան կենտրոնի կողմից Գում Գափուի ցույցին։ Իրականում գա խիստ անհանգստացրեց սուլթանին և նա իր հավատարմատարի միջոցով դիմեց ռուսական ցարին՝ վերջինիս բարեհաճությունը շահելու և թույլ չտալու նրան անգլիական կառավարության հետ միասնական գործողություններ սկսել՝ ստիպելու բարենորոգումների իրագործման համար։

Ռուսական ցարը իր կողմից ապահովության երաշխիքներ տվեց սուլթանին, նշելով, որ իր համար աննպաստ է սահմանամերձ շրջաններում ունենալ անհանգիստ իրավիճակ և հրահանգեց Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ թույլ չտալ կովկասահայերին ջոկատներ կազմած թափանցել Արևմտյան Հայաստան և զենք փոխադրել այնտեղ[8]։

Իրարանցում սկսվեց նաև թուրք հասարակական-քաղաքական շրջաններում։ Թուրքական համարյա բոլոր թերթերը անդրադարձան հուլիսի 15-ի դեպքերին, որակելով այն ւերև դավաճանություն։ Արևմտահայ լիբերալ օրգաններից մեկը՝ «Արևելքը», որը աչքի էր ընկնում իր հակասական հոդվածներով, թարգմանաբար հայ ընթերցող հասարակությանն էր ներկայացնում թուրքական «Միզանի» և «Թերճեմանը հագըգաթ» թերթերի հոդվածները, մեկ-երկու նախադասությամբ իր վերաբերմունքն արտահայտելով դրանց նկատմամբ։ Այստեղ ուշագրավը ոչ թե հայ խմբագրի նկատառումներն էին, այլ թուրք խմբագիրների դիրքորոշումը ժողովրդական հուզումների վերաբերյալ։ Տիրող ազգի ներկայացուցիչները աննախադեպ էին համարում կայսրության մայրաքաղաքում հպատակ ժողովրդի այդ ցույցը և գտնում, որ հայերը հուզումների ոչ մի իրավունք չունեն, քանի որ նրանց մի մասը պետության մեջ գրավում է ղեկավար պաշտոններ։ Թեև առանց փաստի այդ հուզումները նրանք վերագրում էին «օտար գործիչներու խռովահույզ թելադրությանց» և նկատում, որ հայերը իրենք պետք է «...հանչեն մեղավորների խստագույն պատիժը», ժխտելով հայկական բարենորոգումների անհրաժեշտությունը, «Միզանի» խմբագիրը գտնում էր, որ բարենորոգումների կարիք ունեն ողջ պետությունը և կայսրության բոլոր ժողովուրդները։ Նա հակասում է ինքն իրեն, երբ գտնում է, որ հայերը ունեն մյուս մահմեդականներին հավասար իրավունքներ, ապա, դիմելով պատմությանը, բացատրում, որ «սրի իրավունքով» հպատակված ազգի «բաղձանքներն ու ձգտումները առ ոչինչ կգրվեն», և նրանց «մասնավոր սովորությունք կկրճատվին՝ զանոնք ի մի ձուլելու և Տերության միությունն և հանդարտությունը ապահովելու նպատակով»։ Նա ժխտում է հայ պետականության հազարամյա պատմությունը, վերապահորեն ընդունելով միայն «2000 տարի առաջ Տիգրան անուն ցեղապետին»[9]։ «Արևելքի» խմբագիրը շարադրելով թուրք հրապարակախոսի հայացքները, վիրավորվում է, երբ «Միզանի» խմբագիրը հայերին վերագրում է անջատողական ձգտումներ, սակայն չի հապաղում շեշտել, որ «Հայոց փափաքը կենաց, պատվո և ընչից ապահովություն, բարեկեցություն և խաղաղ զարգացումն է քաղաքակրթության շավղին մեջ»[10]։ Ինչպես տեսնում ենք, փաստորեն, հեղափոխական հնչակյան ձանձրույթնի նյութը դատարանում, նրա ցանկությունը համընկնում է լիբերալ խմբագրի՝ Ե. Քեչյանի կարծիքին։ Նրանք վախենում էին հայտարարել անկախ, ինքնուրույն Հայկական պետություն ստեղծելու ցանկության մասին և բավարարվում էին միասնական օսմանյան հայրենիքի արմատական բարեփոխումներով[11]։ Ցույցի մասին հետագայում լրիվ ժխտողական կարծիք հայտնեց վաստակաշատ գիտնական Լեոն 1934 թ. Փարիզում հրատարակված «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» գրքում։ Դատապարտելով «Հնչակին» իր գնահատականի հա-

7 Հնչակ, 1890, № 60։

8 ՌԱՔԱ, ֆ. քաղարխիվ, գ. 3441, թ. 81, 88։

9 Եթե թուրք նորագույն պատմաբանները ընդհանրապես ժխտում են հայերի բնիկ լինելը, ապա նրանց ոչ հեռու անցյալի գրչակիցները քաջություն ունեին ընդունելու «Հայոց քաղաքակրթական անցյալը» այդ տարածքում, միևնույն ժամանակ նշելով, որ հայերը օսմանյան կայսրությունում հսկա թիվ են կազմում՝ «միլիոններով կհամրվին» (Արևելք, 28. VII. 1890)։

10 Արևելք, 28. VII. 1890։

11 Առանձին հոդվածի նյութ կարող է լինել մի կողմից «Արևելքի», մյուս կողմից թուրքական լրագրեր «Միզանի» ու «Թերճեմանը հագըգաթի» բանակռիվը Փոքր Ասիայում իրագործվելիք բարենորոգումների մասին (տե՛ս Արևելք, 1890, № 1960. 1969, 1971, 1975, 1976, 1977, 1978, 1980, 1983)։

մար, նա դանում էր, որ այդ և դրան հաջորդող նման ցույցերը հետագա տարիներին դուռ բացեցին հայկական կոտորածների համար. «Այդ մի աննշան ու չնչին դեպքի օր էր, որ սակայն դարձավ մի ընդարձակ ուլայն բացված դուռ, որի միջոցով աղետներ աղետների հետևից սկսեցին թափվել անմեղ և անգիտակ Թուրքահայ գյուղացիության գլխին»[12]. Իհարկե, հեշտ էր, համարյա կհաղարյա հեռվից նման դնահատական տալ այդ ցույցին, սակայն այլ հարց էր. արդյո՞ք դա համապատասխանում է պատմական իրականությանը։

Ը. Դոան հայաչին քաղաքականության սկիզբը վաղուց էր դրվել, դեռևս XIX դ. սկզբից. Երբ աստիճանաբար կազմավորվում էր Թուրք բուրժուազիան, որը, հանձինս այլադգի նախաձեռնողների, տեսնում էր իր պոտենցիալ մրցակիցներին։ Ազգային բուրժուազիայի ստեղծման ճանապարհին մեծ խոչընդոտ էր հույն և հայ ձեռնարկատերերի ներկայությունը։ Սակայն այդ բաղաքականությունը առավել նպատակալաց դարձավ ռուս-Թուրքական պատերազմից և Բեռլինի կոնգրեսից հետո, երբ Թուրքիան Եվրոպայում կորցրեց իր տարածքի մեծ մասը, և կարող էր վտանգ սպառնալ նաև նրա փոքրասիական տարածքին։ Ֆուազ փաշայի՝ հայերի ինքնուրույնության ձգտումները ոչնչացնելու մասին կտակը ստեղծվել էր անմիջապես այդ դեպքերի ազդեցության տակ, երբ ընդհանրապես գոյություն չունեին ոչ հայկական գաղտնի կազմակերպությունները, ոչ էլ առավելապես քաղաքական կուսակցությունները։ Ձգտում է շփոթել պատճառահետևանքային կապը։ Վերոհիշյալ այդ բոլոր մարմինները ստեղծվեցին Թուրքիայի հակահայկական քաղաքականության հետևանքով։ Ավելի ճիշտ էր դնել պատնեշի և բարիկադի վրա, դենքը ձեռին, պաշտպանելով մարդկային արժանապատվությունը, քան մատաղացու դառ դառնալ։ 1915 թ. իրադարձությունները ցույց տվեցին, որ փրկվեցին նրանք, ովքեր մարտնչում էին։ Գում Գափուի ցույցը իր հարյուրամյա հեռվից մեզ նաև դաս է այսօրվա համար։

Կից հրատարակվում են Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթում տպված հոդվածները և պաշտոնական մեկ զեկուցագիր։ Դրանք առավել ընդգծում են ցույցի ժամանակ և հետո Կ. Պոլսում ու Արևմտյան Հայաստանում տիրող սրված իրավիճակը, հայ և Թուրք հասարակական շրջանների վերաբերմունքը։ Ռուսերեն փաստաթուղթը վերցված է Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվից։

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

№ 1

Պաշտոնական զեկուցագիր

Գում Գաբուի դեպքը

Այս ավուր Թուրք լրագրաց մեջ հրատարակված է հետևյալ պաշտոնական հայտարարությունը.

Սպարապետի դրան մեջ գումարյալ Զինվորական Ատյանն արձանագրած է յուր վճիռն այն սնձանց նկատմամբ, որք Գուրպան Պայրամի առաջին օրը, կիրակի ի Գում Գարու հայոց պատրիարքարանին ու դեմը դտնված եկեղեցվոյն մեջ հավաքվելով հպատակության հանգամանաց հակառակ անպատեհ վարմանց մեջ գտնվիլ համարձակված էին։

Ասոցմե և այս դեպքի պարագլուխներեն Արթին Ճիհանկուլյան մահվան դատապարտված է, որովհետև օսմանյան հպատակները օսմանյան կառավարության դեմ ապստամբեցուցած է և ձեռնարկված է օսմանյան երկրներու մեկ մասը կառավարության իշխանութենեն հանելու։

Սեբաստացի Արթին Նաթուրյան—դատապարտված է 15 տարվա բերդարգելության յաքեա։

Սեբաստացի Նազարեթ—նույնպես 15 տարվա բերդարգելության ի Միտիլլի։

Հույն Նիկոլա—15 տարվա բերդարգելության ի Սինոպ։

Ավետիս և քյոթահյացի Պարոն—5 տարվա բերդարգելության ի Սինոպ։

Երզնկացի Կարապետ—5 տարվա բերդարգելության ի Քիոս։

---

12 Լ. Լ. ո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 175։

Հույն Եուվան —5 տարվա բերդարգելության ի Բայտոս։
Խաչիկ—5 տարվա բերդարգելության ի Լեմնի։
Այս վճիռ-որոշմամբ նախարարաց խորհրդո, Վեհափառ Սուլթանին մաուցած ըլլալով Զինվորական Ատյանը անպարտ արձակած է այս դեպքին առթիվ իբրև ամբաստանյալ ոստիկանության դուռը ղրկած 16 անձեր։ Նորին Վեհափառությունը բարեփոխած է Արթին Ճիհանկուլյանի համար որոշված մահվան պատիժը, հրամայելով, որ ցկյանս շղթայակապ աշխատության դատապարտվի յԱքեա։ Իսկ մյուս անձանց համար հրամայած է գործադրել Զինվորական Ատենին վճիռը։ Այն անձինք, որք կառավարության մը հպատակն յուր գերիշխան պետության դեմ կապստամբեցնեն և կամ կձեռնարկեն տերության երկրի մեկ մասը հանել, մահվան կդատապարտվին և ամեն երկրի մեջ բնականաբար այս պատիժ կգործադրվի. թեև այս անգամվա համար Արթին Ճիհանկուլյան բարձրագուն ներման արժանացած է, սակայն Կայսերական իրատե մը բացարձակապես հրամայած է, որ եթե օսմանյան երկիրներու մեջ անգամ մ'ալ այսպիսի դեպք պատահի, հեղինակներն անմիջապես ձերբակալվելով Զինվորական Ատենի մը պիտի հանձնվին և այս վերջնոյն կողմե ըստ Օրինի վճռված պատիժն ամբողջովին պիտի գործադրվին առանց ներվելու և կամ մեղմվելու։

Արևելք, 8. VIII. 1890 (20 օգոստոսի, № 1969)

№ 2

Ազգային տեսություն
«Միզանի» մեկ հոդվածը Մայր եկեղեցվս ցավալի դեպքին առթիվ

«Միզան» կարևոր շաբաթաթերթին մեծահարգ տնօրենը Մուրատ պեյ, որ օսմանյան գրականության մեջ երևելի տեղ մը կբռնե, յուր հինգշաբթի ավուր թվով ուշագրավ խմբագրական մը նվիրած է Մայր եկեղեցվո հանրածանոթ դեպքերին «Քաղաքական տեսություն» խորագրույն ներքև։ Հետաքրքրաշարժ կհամարինք մեր հարգո պաշտոնակցին տեսությունները ներկայացնել մեր ընթերցողաց, որք թուրքերեն բարձր գրականությամբ խմբագրյալ բնագիր կարդալու կարող չեն. բայց ավելորդ է ազդարարել, թե «Միզանի» կարծեաց պատասխանատվությունը իրեն կվերաբերի, և մեք իր ասույթները քննելու պաշտոն չունինք այժմ։ Մեք լրագրության առաջին պարտավորությունը միայն կկատարենք՝ գրեթե ամեն օր մեր թուրք պաշտոնակցաց կարծիքները ծանուցանելով մեր այն ընթերցողաց, որք չեն կարդար թուրքերեն լրագրեր։ «Միզան» սապես կսկսի յուր հոդված. «Պայրամին առաջին օր Գում-Գափուի հայոց եկեղեցվույն մեջ ցավալի դեպք մը տեղի ունեցավ, որուն օսմանյան ժողովրդոց պատմության մեջ չկրկնվիլն հուսանք թե փափաքելի է նույն ինքն դեպքին հեղինակներուն, դեպք, զոր հավատարիմ հայ ազգն ամոթով և ուրիշ օսմանցիներն ալ ապշությամբ և ցավով տեսան»։

Դեպքն այնքան անակնկալ էր, որ եթե վավերական տեղեկությամբք համոզված չլիներ, «Միզան» հավատ չպիտի ընծայեր «Հպատակության տարրական զգացմամբք օժտյալ մարդ մը, մարդկային ընկերության էական պայմաններուն տեղյակ և քիչ շատ խելահաս մարդ մը անհավատալի պիտի գտներ այս արկածը»։ «Անիմաստ, անդեպ խռովություն մը, զոր «Միզան» չի վարանի մի քանի օտար գործիչներու խռովահույզ թելադրությանց վերագրել. «Ամենեն ավելի ոյք պետք է ցավին, խռովության հեղինակներուն պատժումը ամենեն ավելի ոյք պետք է խնդրեն։ Եվ հետզհետե կրկնվող այս կարգի արկածներու հանդեպ կառավարական օրինաց գործադրումն ամենեն ավելի ոյց հավանության պետք է արժանանա»։

«Միզան» տարակույս չունի, թե ամենեն ավելի հայ ազգ գոհ պիտի մնա, որ այսպիսի արկածք չկրկնվին և հեղինակները պատժվելով՝ ազգին ընդհանրությունն համախոհ չկարծվի։

«Մեր քաղաքային նոր դրութիւններն և օրենքները ժողովրդոց մեջ ըստ օրինի տիրող և տիրապետյալ, հարստահարող և հարստահարյալ անվամբ ուրույն բաժանումներ չեն թողած այլևս։ Ընդ հովանյավ վեհ. Սուլթանին ամեն օսմանցիք իրավանց և պարտուց, արտոնութեանց և առանձնաշնորհմանց մասին հավասար են։ Եվ եթե շատ բարակ բաղդատութիւններ ընելու լինեք, կրնանք ըսել, թե առավելությունն ոչ մահմետական ժողովրդոց կողմն է, որք արյան տուրքեն զերծ կգտնվին։ «Մտնավանդ հայ ազդ ամենեն ավելի պատվույ և իշխանության արժանացած է։ Կարևորագույն նախարարութեանց և նախարարական խորհրդակցութեանց պաշտոնք, գեսպանությունք, Ծերակույտի և պետական խորհրդո անդամությունք, գերագույն ատենից նախագահությունք, ընդհանուր դատախազությունք, ի մի բուն Տերության մեջ ամենաբարձր պաշտոնք բաց գտնված են Հայոց կարողության և արժանավորության առջև»։ «Միղան» կհարե «Ոչ ոք կլնդե, թե օսմանյան տերության մեջ հանրային բարեկեցության և ապահովության տեսակետով հարկավոր դատված տնօրինությունք լիովին ի գործ դրված են։ Չենք ալ ըսել, թե ներքին դավառաց մեջ անկարգության վերջը բերել կարելի եղած է դեռ։ Բայց դիտելի երկու պարագաներ կան, որք առարկելու իրավունք չեն տար ո՛չ մեկու, նախ թե վեհ. Սուլթանին գահակալութենեն ի վեր անկարգության պատճառներ բառնալու և պետք եղած բարեկարգութիւններն ի գործ դնելու համար կայս. կառավարությունն ամենայն փութաջանությամբ կաշխատի, և երկրորդ, դեռևս մնացյալ անբարեկարգության երեսեն Տերության ժողովրդոց ոչ թե մին, այլ ամենքն, ոչ միայն Հայք, այլև մահմետական ժողովուրդք կվնասվին։ «Միղան» արգելք մը չի տեսներ, որ հայրենիք և տերություն մեծակշիռ բառերը գործածելով Հայք օսմանյան Հայրենիքն և օսմ. Տերությունն ևեթ իմանան, օսմ. Տերության անձնվեր լինին և մերժեն խռովահույզ ձեռնարկներն»։

«Եվ եթե այս արգելք ներկային նկատմամբ գոյություն չունի, անցելույն նկատմամբ գոյություն ունի՞ միթե»։

Մեր թուրք պաշտոնակից հոս պատմական կարևոր խնդիր մը կհուզե և իրեն հատուկ տեսություն մը կպարզե. «Ինչպես հին ազգաց քաղաքակրթական անցյալ ծառայություններն հարգանոք կհիշենք, հայոց ևս քաղաքակրթական անցելույն սիրով կծափահարենք։ Բայց թե իրենց անցելույն վրա հենլով օսմանյան միության շրջանակեն դուրս քաղաքական ինքնուրույն գոյություն մը չեն կարող երևակայել՝ դյուրին է ապացուցանել պատմություն ի ձեռին։ Երբ ազգ մը յուր աշխարհակալության շրջանին մեջ բախվելով՝ ուրիշ քաղաքակրթյալ և կազմակերպյալ ազգի մը՝ գրավե զայն և յուր երկրին հետ միացնե, պարտված ազգին բաղձանքներն ու ձգտումներն առ ոչինչ կգրվին «սրո իրավամբ», և եթե վրայեն ժամանակ անցած է իբրև «կատարյալ իրողություն» կնկատվի նոր դրությունը։ Նաև, արդարացուցիչ պատճառներ կրնան ցույց տրվիլ աշխարհակալ ցեղին այն տնօրինությանց ոգով՝ երկիրը միօրինակ վարչությանց վերածելու և հանրային հանդարտությունը լավագույնս ապահովելու համար՝ մասնավոր ժողովրդոց հատուկ սովորությունններն ու դրությունները կկրճատե, կփոփոխե։ Արդի քաղաքակիրթ գարուս մեջ իսկ այս իրողության օրինակները կերևին Գերմանիո, Ավստրիո և Ռուսիո մեջ, և հայք իրենց անձնական փորձով ալ գիտեն նույնն։ Իսկ եթե օսմանյան պատմությունը քննենք, այս տեսակ արդարացուցիչ պատճառներ որոնելու պետք ալ չենք զգար։ Օսմանցիք Հայկական կառավարության մը վերջ չտվին։ Օսմանցիներեն առաջ հայոց վրա իշխող Սելճուգյանք և Արասյանք ևս անկախ Հայաստանի մը չքախեցան։ Ասկե 2000 տարի առաջ Տիգրան անուն ցեղապետն յուր անձնական ջանիվք կհաջողի պետություն մը կազմել, բայց ժամանակ մը ետքը հռոմայեցի զորավար Լուկուլլոս 11000 զորքե բաղկացյալ իր բանակով կհաղթե Տիգրանի, որ կհպատակի հռոմեական տերության։ Յորմե անտի Հայոց բնակած երկիրն ի սկզբան Արևմտյան Հռոմա և հետո Արևելյան Հռոմա (Բյուզանդիոնի) Տերության և ապա հաջորդաբար Աբասյանց, Մելիքաց և ի վերջո Օսմանցվոց նահանգներեն մին եղավ։ Ուրե-

մրն, ոչ իսկ պետք ունինք պատերազմական իրավամբ երկրին տիրած լինելու փաստն ի մեջ բերել, որ երկրորդական փաստ մ'է։ Գալով այն տնօրինությանց, որովք հպատակ ժողովրդոց մասնավոր սովորությունք կկրճատվին՝ զանոնք ի մի ձուլելու և Տերության Միությունն և հանդարտությունն ապահովելու նպատակով օսմ. տերությունն աշխարհի վրա եղական հանդիսացած է յուր ներողամտությամբ և առատասրտությամբ, որով ազգային ուրույն իրավունքներն ու սովորություններն հարգված է միշտ։ Ֆրանսայի և Ամերիկայի հանրապետությունք, որք իրենց երկրեն վանեցին ճիզվիթներն ու մորմոններն՝ այն մասին օսմ. տերութենեն շատ ետ մնացած են։ Հայք, որ հարյուր հազարներով կհամրվեին, երբ օսմանյան վարչության հայրական հովանվոյն ներքև ապաստանեցան, այսօր միլիոններով կհամրվին և իրենց առտնին բարեկեցությամբ և ապրելու եղանակավ մահմետական ժողովուրդեն ավելի հառաջացյալ վիճակ մ ունին։

Հետևապես «Միզան» կբաղձա, որ Հայք սիրով և հավատարմությամբ հարյալ մնան օսմ. Տերության և հետ այսորիկ կառավարական պաշտոնյաներեն ավելի հոգ տանին, որ Մայր եկեղեցվո դեպքին նման արկածք չկրկնվին օտար թելադրությամբ կամ տկար դատողությամբ։ Ի վերջո, «Միզան», ի սեր բարեկեցության հասարակային հայրենյաց, կմխիթարվի խորհելով, թե այս ցավալի արկածին պատասխանատվությունը բովանդակ հայ ժողովրդյան չի պատկանիր։

Կանխավ ըսինք, թե մեր հարգո պաշտոնակցին քննած խնդրույն վրա չպիտի խոսինք։ Արդի պարագայից մեջ պատմական վիճաբանության մը ալ անպատեհ պետք է համարինք։ Բայց անհնար և մանավանդ աններելի է չհիշեցնել մեր հարգո պաշտոնակցին, թե ձրի ենթադրություն մը կընե կարծելով, թե Հայք ինքնուրույն պետություն մը լինելու հետամուտ գտնվին։ Այս տեսությամբ յուր ըրած բոլոր խորհրդածությունք և եզրակացությունք ավելորդ կթվին մեզ։ Բաց աստի, քանի որ այս հասարակային հայրենյաց մեջ ամեն ժողովրդաց սիրալիր հայրենակցության փափաքող կերևի, մեր պաշտոնակից պետք է զգուշանա հայ ժողովրդյան նույնիսկ մեկ փոքրամասնության վերագրե ծայրահեղ խորհուրդներ, որք մահմեդական և հայ ժողովրդոց մեջ պաղություն ձգելու պատճառ կրնան լինել, բան մը, որ յուր հայրենասիրական բաղձանաց գլխովին հակառակ պետք է դա։

Հայոց փափաքը կենաց, պատվո և ընչից ապահովություն, բարեկեցություն և խաղաղ զարգացումն է քաղաքակրթության շավղին մեջ, և ապահով են, թե այս բարիքը կրնան միշտ վայելել ընդ գերիշխան հովանավորությամբ և պաշտպանությամբ իրենց վեհապետին, սուլթան Աբդուլ-Համիտ խանի, գործադրմամբ Ն. Կ. վեհափառության բարեմիտ և հոգածո տնօրինությանց և գիտավորությանց ի բարեկեցություն յուր հպատակաց։

Արևելք, 28. VII. 1890 (9 օգոստոսի, № 1960)

№ 3

Ազգային տեսություն

«Միզանի» մեկ նոր հոդվածը Մայր եկեղեցվո դեպքին վրա

Թե մեր մյուս թուրք պաշտոնակիցք կատարյալ լռություն կպահեն, բայց «Միզան», որ յուր անցյալ հինգշաբթի ավուր (2 օգոստ.) թվով զարմանք կհայտներ թուրք լրագրաց լռության վրա, յուր երեկի թվով երկրորդ հոդված մը կնվիրե Մայր եկեղեցվո հանրածանոթ ցավալի դեպքին, որո պաշտոնական ելքն ընթերցողք տեսան Արևելքի չորեքշաբթի ավուր թվով թարգմանյալ կառավարական հայտարարության մեջ։ «Միզանի» այս նոր հոդվածն ևս իբրև հետաքրքրաշարժ ինչ կներկայացնենք մեր ընթերցողաց, վերապահելով սեր պատասխան։

«Միզանի» նոր հոդվածին խորագիրը (զի խորագիրն անգամ ուշագրավ է), սա է, «Անկեղծության պետքն»։ Անկեղծություն կպահանջե յուր հայ պաշտոնակիցներեն, որք սակայն կեղծավորությամբ չմեղանչեցին այս խնդրույս մեջ։ Եվ ինք կձեռնարկե յուր ինքնուրույն ոճով՝ անկեղծորեն և համարձակապես զրուցել մեզ, ինչ որ յուր հայրենանվեր միտքեն կանցնի այս վշտալի դեպքին վրա, որուն անպատճառ ավագ կարևորություն մը տալու կհամառի ազգասիրաբար։ «Միզան» կրսե, թե Պայրամին առաջին օրը Գում-Գափու հայոց եկեղեցվոյն մեջ պատահած ցավալի դեպքին վրա յուր հրատարակած խմբագրական ներքուստ և արտաքուստ արձագանք գտած է մեծապես։

«Այս այլազան արձագանաց մեջեն մեզ ամենեն ավելի հաճելի էին տեղական հայ մամլույն հերքողական պատասխանները։

Մեք հենլով պաշտոնապես ստուգված և հրատարակված իրողության վրա, հիշեր էինք, թե հայոց մեջ կան խռովահույզներ, որք Օսմ. Տերության ամբողջության անհամաձայն դավադրական խորհրդոց զհետ կպնդեն։ Ցուցուցեր էինք, թե հայոց ոչ անցյալն և ոչ ներկան արգելք չեն իրենց, որ մահմեդական և ուրիշ հայրենակցաց հետ եղբայրական սիրով հետամուտ լինին հասարակային հայրենյաց բարօրության, հավատարմության շավղին մեջ։ Հետևապես հույս հայտներ էինք, թե հայ հասարակությունը նախաձեռնարկ պիտի լիներ այդ անպատեհ շարժման հանդգնողաց պատժվիլը պահանջելու. որպեսզի այս երկրին մեջ և արտաքո երկրին հայոց համբավը չաղարտի։

Հայերեն հրատարակվող լրագիրք ոմանք, պնդելով թե Օսմ. Տերության միության և ամբողջության նույնիսկ դույզն հարված մը տալու տրամադիր հայեր չեն գտնվիր, անպատեհ ցույց տվին մեր խորհրդածություններ, որք հայրենակից ժողովրդոց մեջ պաղություն կրնան եղեր ձգել։

Երբ այսպես հայ լրագիրք մեր գրածին հակառակ կպնդեն հօգուտ երկրին և պետության կփափաքեինք անկեղծապես, որ իրենք իրավունք ունենային և մեր խոսքը լիներ սխալ։ Բայց կցավինք, որ իրենց դատը մերինը չափ ապացուցյալ չի թվիր գործնական իրողությամբ։

Եվ իրոք, կարգ մը վնասակար թերթերու գոյությունն, որ չուրացվիր և ինչ-ինչ խռովահույզ շարժմունք կապացուցանեն, թե գուցե օտար թելադրրմանց անսալով՝ հայրենասիրական պարտավորությանց հակառակ գործող անհատք ոմանք կգտնվին հայ ժողովրդյան մեջ, որ ոևե կերպիվ պետք չէ երբեք տածե օսմանյան դարավոր պետության միության և ամբողջության ներհակ ձգտումներ։

Թե այս անհատք փոքր թիվ մը կկազմեն կամ թե իրենց անպատեհ արարք անել կմնան՝ տարբերություն չըներ. ամոթ կա և կմնա հայ ժողովրդյան համար և անշուշտ խորին վիշտ կպատճառե մեր հայրենասիրության և հավատարմության[1]։ Կացությունը նկարագրելով ըստ հաստատյալ իրողության, կհուսայինք անկեղծապես թե յաչս ուշիմ հայ ժողովրդյան ևս առավել խոտելի պիտի թվեին այդ արարք և շարժմունք։ «Միզան» չի կրնար ընդունիլ, որ յուր ընթացք թյուր մեկնվի, կամ յուր արտահայտած տեսությունք պարզապես սխալ կարծիք մը համարվին հայ լրագրաց կողմե. «Ինչպե՞ս հապա, Պայրամին առաջին օրը, երբ՝ ընդհանուր բերկրության մեջտեղ՝ Տերության ավագանին և աստիճանավորք կփութային յոտս գահոյից նորին օգոստափառ վեհափառության իրենց ծառայական խորին մեծարանքը մատուցանելու, ճիշտ այն պատկառելի և մեծավայելուչ արարողության միջոցին հայ ժողովուրդը, Գում-Գափուի խռովահույզ արկածն հառաջ բերելով և այն պաշտոնական սրբազան արարողության բարեկարգությանը խանգարելով, միթե յուր մահմետական հայրենակցաց գոհության և շնորհակալությա՞ն արժանացավ[2]։

[1] Ցուր նախորդ հոդվածով մեր հոգևոր պաշտոնակից կհաստատե, թե ազգին ամբողջությունը պատասխանատու չի կրնար բռնվիլ յուր անդամոց ոմանց ծայրահեղ արարքներուն համար։

[2] Միզան ահռելի հակասության մեջ է։ Քիչ մը վերը կրսեր, թե խռովահույզք քանի մը

Արդյոք կկարծեն, թե այս բաները դատելու չափ մտավոր կարողություն և զգալու չափ սիրտ չկա ի մեզ և թե իրենց ամեն ոտնձգությանց աչք դոցելու հարկադրված ենք։ Ամեն պարագայի մեջ ակներև է, թե մեր պաշտոնակցաց կողմե քիչ մը ավելի անկեղծություն ակնկալելու իրավունք ունինք։

Մեր կետ նպատակին է, թե Տերության պաշտոնական գործառնության մեջ «օսմանցի» փառավոր անվամբ հորջորջյալ ամեն հասարակության միջև «Մեք» և «Դուք» խտրողական բացատրության գործածման տեղի չմնա։ Օսմ. Կայս. կառավարությունն այս մասին ինքնահոժար կարգ մը զոհողություններ ընելով, խնդիրը տեսականորեն կարգադրած է։ Մնացյալն ոչ թե կառավարության ջանքերեն, այլ ժամանակին օգնութենեն կակնկալվի, կամ քաղաքային բարեկարգության տակավ արդյունավորումեն, և ինչ-ինչ հասարակության ինքնաբուխ աջակցութենեն, որպեսզի այս քաղաքային բարենորոգմունք օր առաջ ընծայե ակնկալյալ պտուղներ։

Լրագիր մը կդրե, թե «Հայք օսմ. Տերութենեն բաժնվիլ չեն ուզեր, այլ միայն Հայոց պատվո, կենաց և ընչից ապահովություն կպահանջեն»։

Այս բանիս ամենեն ավել փափագող մեր օգոստոսափառ վեհապետն ինքն է։ Ապահովության արդի չափն անբավական համարելով, կայս. կառավարությունը՝ զայն կատարելագործելու համար՝ չի կասիր նոր կազմակերպություններ, հաստատություններ և տնօրինություններ ի կիր առնել։ Այդ ապահովության չափն յաշս Կայսերական կառավարության փափաքյալ աստիճանին հասնի թե ոչ, ճշմարտություն մը կա, որ հերքում չի վերցներ. այսինքն՝ Ն. Կ. Վեհափառության հայ հպատակաց պատիվը, կյանքն և ինչքն ամեն պարագայից մեջ Թուրքաց, Քրդաց և Արարաց պատվոյն, կյանքին և ինչքին չափ և թերևս ավելի պաշտպանություն և ապահովություն կվայելեն արդեն։ Զայս դյուրին էր ապացուցանել, եթե առտնին բարեկեցության և հանրային հարստության մասնակցության վիճակագրական ցուցակք պատրաստված լինեին։

Ուրեմն փոխանակ ըսելու, «այն ինչ ազգին» կենաց պատվո և ինչից ապահովություն, ինչու չըսվի «տեղական ժողովրդյան կենաց, պատվո և ընչից ապահովություն»[3]։ Այս բանիս իբրև արգելք սա միայն կա, թե հպատակության ոմանց անհատներու մեջ անկեղծության և փոխադարձ սիրո և հայրենակցության զգացմանց պակասություն մը կնշմարինք դեռևս։

Միգան, ևս քան զևս բացահայտելու պետքն զգալով, հետևյալ կերպով իբրև անպատեհեն կնշավակե բաժանողական ձգտումներն, որոնց գոյությունը կկարծե նշմարել հայ ազգին մեջ։ Տերությունն սկզբամբ ոչ մեկ ժողովուրդ առանձնաշնորհյալ նկատելով, ամենուն նկատմամբ հավասարապես արդարություն և պաշտպանություն ի գործ կդնե։ Մանավանդ հայ ազգն այլևս մասնավոր իրավունք մը չունի օսմ. Տերության վրա։

Ենթադրենք, թե բանն այսպես չլինի։ Ենթադրենք, թե Հայք պատճառներ ունենան օսմ. Տերութենեն բաժնվելու համար աշխատելու։

Բայց դարձյալ խոհեմություն չեմ կրնար համարել այդպիսի ընթացքի մը հետևիլ։ Եվ այս 2 պատճառով։ Նախ Հայք, որ օսմ. Տերության ամեն կողմեր ցրվյալ են, ոչ ուրեք բնակչաց մեծամասնություն կազմած են[4]։

Եվ երկրորդ, Եվրոպա օսմ. Տերության մեջ քաղաքական շարժումներն և սնոտի ակնկալություններն յանցելումն քաջալերելու համար այնքան դառ-

---

անհատք են, ինչպես Պաշտոնական Հայտարարութենեն ալ երևցավ. մինչ հոս՝ այս ծանրակշիռ հարձակողական պարբերության մեջ՝ բովանդակ հայ ժողովուրդն այն խռովության մասնակից և գործակից ցուցնելու չափ հառաջ կտանի ծայրահեղությունը։

3 Հայ լրագրաց մեջ լզրվեցավ այնպիսի դիտողություն մը, թե «կենաց, պատվո և ընչից» ապահովություն հայոց համար միայն պետք են։

4 Ուրեմն եթե մեծամասնություն կազմեին, կամ կազմել կարծեին, ներելի պիտի լինե՞ր իրենց այս տեսակ բաժանողական խորհուրդներ տածել։ Զարմանալի է, որ այս պարզ դիտողության կվրիպի մեր հայրենասեր և ուշիմ պաշտոնակցին սրատես աչքն (ծանոթագրությունները «Արևելքի» խմբագրի)։

նապես զղջացած է, թեև ուշ-որ՝ շնորհիվ օգոստոսափառ Վեհապետին՝ Եվրոպա այլև այնպիսի ոտնձգություններ ընելու փափագ չի տածեր բնավ։

Ուստի, մինչև իսկ եթե օսմ. Տերության վարչություն մեջ կենան պատճառներ, որք այն Տերութենեն բաժնվելու շարժման իրավունք տան, դարձյալ հարկ անհրաժեշտ է ջանալ այն պատճառներ բառնալու անկեղծ և զգուշավոր գործողությամբ։ Բայց երբ գիտենք, թե՝ շնորհիվ կայսերական ջանից և հոգածությանց, այնպիսի պատճառներ չեն մնացած, ո՞չ ապաքեն բնական է խորին ցավ զգալ, եթե օսմ. Տերութենեն բաժնվելու ձգտումնք և շարժումնք տակավին շարունակեն։

Արևելք, 10. VIII. 1890 (23 օգոստոսի, № 1971)

№ 4

«Միզան», «Թերճիմանը հագիգաթ» և իրենց հակասությունք

«Միզանի» դափնիք անքուն թողեր էին «ղԹերճիմանը հագիգաթ», որ չուզեր ղրկել զմեզ այս նոր անոր լույսերեն, զորս ինք ուներ ի պահեստի, ի բացատրություն Մայր եկեղեցվո ցավալի դեպքին, որո ելք՝ յոթն հայերու և 2 հույներու դատապարտությունը Զինվորական Ատենեն, արդեն ծանոթ է մեր ընթերցողաց։

Փութանք հաստատել, թե մեր այս հարգո պաշտոնակից «Թերճիմանը հադիգաթ» «Միզանի» օրինակին կհետևի Հայոց վրա գրելով միայն, և ոչ թե իրավցնելով «Միզանի» տեսությունները։ Ջա՞րժեր միթե մեր թուրք պաշտոնակցաց այս զանազան կարծիքները ծանոթացնել մեր ընթերցողաց այնպիսի խնդրո մը վրա որ ուղղապես կվերաբերի մեզ, մինչև իսկ թեև հարկադրյալ լինինք կրկնել թե մեր մասին՝ այսպիսի խնդրոց վրա վիճաբանություն անպատեհ է։ Պատեհութենեն ավելի, խոհեմության հակառակ է գուցե։

Եվրոպյան լրագիրք ոմանք ծանուցած էին թե Հայոց դատն հիմնավոր նկատվելով, Ռուսիա և Անգլիա համաձայնած են Բ. Դրան ընդունել տալու Հայոց պահանջումներեն։ Ուրիշ լրագրեր անմիջապես հերքեցին այս լուր, ինչպես մեք ևս հաղորդեցինք Փարիզի լրագրո մը մեջ (Վոլթեռ) երևցած հերքումը։ «Թերճ. հագիգաթ» առանց այս հերքման ալ այդ լուր անհիմն կնկատե, որովհետև, կըսե, Ռուսիա ուրիշ քրիստոնյա ազգություններ պաշտպանելով հետո այնքան զղջացած է, որ Հայոց վրա նոր փորձ մը ընելու չի կրնար հրապուրվիլ։ «Բայց ո՞յք և ի՞նչ նպատակով կհերյուրեն այս սուտը։ Անոնք շահակից կառավարությանց ուշադրությունը գրավելու նպատակով չեն գործեր անշուշտ, ըստ որում կառավարությունք արդեն ուշադիր կգտնվին այս նուրբ խնդրոց։ Այս սուտերը հերյուրողներուն բուն նպատակը միամիտ հայերը խաբել է։ Հայոց մեջ կարծիք մը գոյացնել կուզվի թե՝ «Տեսեք, մեր խնդրույն համար այս 2 մեծ տերությունք, Ռուսիա և Անգլիա, ինչպիսի համաձայնության մը հանգել են։ «Թերճիմանը հագիգաթ» թե պաշտոնապես և թե անպաշտոն լրագրաց միջոցով հաղորդեալ տեղեկությանց վրա հենլով համոզված է, թե Մայր Եկեղեցվո դեպքն ոմանք հարուցած են դրամական քաջալեր ընդունելով որոշյալ տեղերե և կհետևցնե, թե Հայ ազգն այս դեպքին պատճառ ամոթապարտ կամ պատասխանատու չի կրնար բռնվիլ։ «Հայ ժողովրդյան և օսմանյան հանրային մարմնոյն միջև կեցած հայրենակցական բարվոք հարաբերությունք այս դեպքին պատճառով պետք չէ խանգարին։ Եվ ինչու խանգարին, քանի որ Պաշտոնական հայտարարութենեն ալ երևցավ, թե խռովահույզք ինն հոգի էին եթե, որոց երկուքն հույն, Նիքոլան և Եուվան։ Հարյուրավոր ներկայից մեջեն երբ ինն անձինք եթե հանցապարտ կճանցվին և անոնց ալ երկուքն ուրիշ ազգության մը կպատկանին, ինչպես կարելի է այս պատճառով բովանդակ հայ ժողովուրդը զրկել մեր վստահութենեն ու համակրութենեն»։

Ակներև է «Միզանի» և «Թերճիմանը հագիգաթի» կարծյաց հիմնական տարբերությունն այս խնդրոց վրա։ «Միզան», մանավանդ այս երկրորդ հրա-

շակերտով, բովանդակ հայ ժողովուրդը խռովահույզ ողով մը վարակեալ Նցուցաներ, բովանդակ հայ ազգն ամոթապարտ և պատասխանատու կրոներ Մայր եկեղեցվո դեպքին համար, զոր այլևս անհատից ոմանց գործ չէր համարեր։ «Թերճիմանը հագիգաթ» այդ դեպքը միայն ինն հոգվո գործ կնկատե, որք արդեն դրամ ընդուներ են իրենց այս հանդգնության համար և այս 9 հոգվոց ալ երկուքը հույն գտնվելով, «Թերճիմանը հագիգաթ» անտեղի կհամարի բովանդակ հայ ազգը պատասխանատու բռնել յոթն հոգվո արարքին համար։ Այս երկու տարբեր տեսակետներ այլ և այլ տեսությամբ ուշագրավ են։ «Թերճիմանը հագիգաթ» հետևյալ կերպիվ կեղրակացնե։

«Լրագրաց ոմանց մեջ այս խնդրոյն կարևորություն տալու համար հրատարակված հոդվածներուն որոց կողմե և քանի զրուշի գրված լինելը իմացված ստուգված է։ Հեղինակներն իրենք ալ գիտեն, թե Եվրոպա այս հրատարակություններեն չի խաբվիր։ Ուրեմն իրենց նպատակն հայերը խաբել է միայն, երբ կշարունակեն այն հրատարակություններ։ «Տեսեք մեզ համար որպիսի բաներ կգրվին»։ Այս խաբեությամբք խեղճերը պատժական խստությանց ենթարկել տալ կուզվի։ Այս ճշմարտության առջև պետք է բացվին Հայոց աչքերն և 8—900 տարիներե հետե, այսինքն՝ Օսմ. Տերության կազմությենեն առաջ արդեն հայրենակից գտնվող և խաղաղապես ապրող այս երկու ժողովուրդք (Հույք և Օսմանցիք) որ երբեք իրարու չեն վնասած, պետք է անվթար պահեն և շարունակեն իրենց միասիրտ և միաբան հայրենակցությունը»։

Արևելք, 16. VIII. 1890 (28 օգոստոսի, № 1975)

Николаю Карловичу Гирсу от Нелидова

Беюкдере, 19/31 июля 1890 г.

Выдающимися являются кровавые беспорядки, происходившие в воскресение в Стамбуле, близ армяно-григорианской патриархии в Кум—Капу. Сведения о беспорядках приведены были во дворец среди церемонии поздравлений по случаю праздника Курбан-Байрама. Султан был жестоко встревожен и испуган. Он хотел тотчас же прекратить торжество, но его уговорили довести его до конца. Для усмирения бунтовщиков послан был из дворца Дервиш Паша, которому и удалось восстановить порядок. Но этим дело не кончилось. Среди армян господствует жестокое возбуждение, поддерживаемое беспрестанными арестами и преследованиями всех подозреваемых в принадлежности к предполагаемому революционному комитету, устроившему манифестацию против Патриарха. Существует ли здесь действительно подобный комитет, узнать трудно, но несомненно, что беспорядки вызваны возбуждением извне, преимущественно из Лондона, откуда центральный армянский комитет поддерживает брожение и раздувает неудовольствие среди армянского населения Турции, с целью поставить на очередь Армянский вопрос. Нельзя не подозревать, что этому действию сочувствует английское правительство, надеющееся тем вызвать усложнения на руоско—турецкой границе и ослабить наши хорошие сношения с Портою. На это указывал и намек ,сделанный мне на прощальной аудиенции Султаном—о распущенных в Константинополе слухах, будто армянское брожение вызвано нами. Нельзя не пожалеть, что со своей стороны турецкие власти безумною подозрительностью и бестактным приложением мер

строгости, вызывают ненависть и враждебность армянского населения, очень значительного в столице и рассеянного по всей Турции. Из этого легко могут произойти весьма опасные усложнения.

НЕЛИДОВ

* Н. К. Гирс—министр иностранных дел России.

АВПР, ф. Политархив, д. 3441, л. 31—32.